Հավելված N 2
ՀՀ քաղաքաշինության նախարարի
2015 թվականի մայիսի 20-ի
N 114 հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ

ՏԵՍՉԱԿԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
N 07

ՀՀ Լոռու մարզպետարանի քաղաքաշինության վարչությունում կատարած տեսչական ստուգման արդյունքների մասին

« 10 » նոյեմբերի 2015թ. ք.Վանաձոր
ք.Երևան

Ի կատարումն ՀՀ կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 12-ի "Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողություն իրականացնելու կարգը սահմանելու մասին" N 624 որոշման, ՀՀ քաղաքաշինության նախարարի 2015 թվականի մայիսի 9-ի "Հայաստանի Հանրապետության մարզպետարաններում տեսչական ստուգումներ անցկացնելու մասին" N 78 հրամանով հաստատված ժամանակացույցի և ՀՀ քաղաքաշինական պետական գլխավոր տեսուչի 2015 թվականի հոկտեմբերի 19-ի N 07 տեսչական ստուգման հանձնարարագրի, ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի քաղաքաշինական պետական տեսչության հանձնախումբը հետևյալ կազմով՝

Մ. Հովհաննիսյան - քաղաքաշինական պետական տեսչության պետ – ՀՀ քաղաքաշինական պետական գլխավոր տեսուչի տեղակալ - հանձնախմբի ղեկավար,

Մ. Միրզոյան - քաղաքաշինական պետական տեսչության նորմատիվատեխնիկական և քաղաքաշինական փաստաթղթերի վերահսկողության բաժնի գլխավոր մասնագետ - հանձնախմբի անդամ,

քաղաքաշինական պետական տեսչության Լոռու տարածքային բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Է. Ղարաքեշիշյանի և մարզպետարանի ներկայացուցիչներ՝ քաղաքաշինության վարչության պետ Ա. Ջանազյանի և նույն վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ Գ.Հախինյանի մասնակցությամբ, 2015 թվականի հոկտեմբերի 19-ից 23-ը տեսչական ստուգում է անցկացրել ՀՀ Լոռու մարզպետարանի քաղաքաշինության վարչությունում:

Տեսչական ստուգումն ընդգրկում էր 2014 թվականի հոկտեմբերի 12-ից մինչև 2015 թվականի հոկտեմբերի 19-ը ընկած ժամանակահատվածը:

Ստուգման ընթացքում պարզվել է՝

1. Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի փոփոխության կամ բացակայության դեպքում, ինչպես նաև քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում մարզի համայնքներից մարզպետարան համաձայնեցման ներկայացված հողահատկացման, տարածքների նպատակային կամ գործառնական նշանակության փոփոխման առաջարկությունների, ճարտարապետահատակագծային առաջադրանքների ու նախագծերի համաձայնեցման գործընթացների համապատասխանությունը ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգերի պահանջներին

Ստուգման ենթակա ժամանակահատվածում, ըստ մարզպետարանի կողմից տրամադրված նյութերի, մարզի համայնքներից համաձայնեցման նպատակով ՀՀ Լոռու մարզպետարան էին ներկայացվել հողահատկացման, տարածքների գործառնական նշանակության փոփոխման, ՃՀԱ-ների ու նախագծերի համաձայնեցման 27 առաջարկ, այդ թվում Վանաձորից՝ 22, Տաշիրից՝ 4 և Ստեփանավանից՝ 1:

Վանաձորից ներկայացված 22 առաջարկից 1-ը հետ է վերադարձվել ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից, պահանջելով լրացուցիչ նյութեր, 4-ը համաձայնեցվել է ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից, այդ թվում 2-ը՝ սահմանված կարգով, իսկ 2-ը քաղաքաշինական տեսանկյունից ոչ նպատակահարմար տարածքներում՝ ընդհանուր օգտագործման տարածքներում, սիզամարգերի, մայթերի վրա և կառուցապատման գծից դուրս /Երևանյան խճուղի 31 շենքի հարևանությամբ 0,05հա տարածքը հասարակական կառուցապատման համար և Աբովյան փողոց 53, խանութի ընդլայնման համար 0,00732հա տարածք/, 13-ը՝ սահմանված կարգով համաձայնեցվել է ՀՀ Լոռու մարզպետարանի և ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից, 1-ը համաձայնեցվել է ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից, սակայն մերժվել ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից, իսկ 3-ը՝ համաձայնեցվել է ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից, սակայն ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից պահանջվել են լրացուցիչ նյութեր:

Տաշիրից ներկայացված 4 առաջարկից 2-ը մերժվել է ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից, այդ թվում 1-ը՝ առանց լուրջ հիմնավորումների /Երևանյան փողոց 202, 190քմ, խանութ-տաղավարի վերակառուցում և ընդլայնում/, իսկ մյուսը՝ շինարարությունը սկսված լինելու պատճառով, 1-ը՝ սահմանված կարգով համաձայնեցվել ՀՀ Լոռու մարզպետարանի և ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից և 1-ը՝ համաձայնեցվել ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից, սակայն ՀՀ քաղաքաշինության նախարարության կողնից հետ է վերադարձվել, պահանջելով պահպանել հակահրդեհային նորմերը և կառուցապատման գիծը:

Ստեփանավանից ներկայացված 1 առաջարկը համաձայնեցվել է ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից և ուղարկվել ՀՀ քաղաքաշինության նախարարություն, սակայն պատասխան դեռ չի ստացվել:

2. Շինարարության և քանդման թույլտվությունները մարզի համայնքներից մարզպետարան ներկայացնելու գործընթացի, ինչպես նաև ներկայացված շինարարության և քանդման թույլտվությունների համապատասխանությունը ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգի պահանջներին

Ստուգման ենթակա ժամանակահատվածում ՀՀ Լոռու համայնքներից մարզպետարան էին ուղարկվել 155 շինարարության թույլտվության պատճեններ, այդ թվում Վանաձորից՝ 116, Տաշիրից՝ 13, Ստեփանավանից՝ 7, Օձունից՝ 6, Ծաթերից և Մարգահովիտից՝ 2 - ական, Ագարակ, Յաղդան, Կարմիր Աղեկ, Շահումյան, Լեռնապատ, Լոռու Բերդ, Այգեհատ, Նեղոց և Արդվի համայնքներից՝ 1 - ական:

Մարզպետարան էին ուղարկվել նաև 21 քանդման թույլտվության պատճեններ, այդ թվում Վանաձորից՝ 15 և Մարգահովիտից՝ 6:

Շինարարության թույլտվությունները համայնքների մեծ մասում լրացված էին ՀՀ կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 91 որոշմամբ սահմանված կարգի խախտումներով: Այսպես, Վանաձորում առկա են թույտվություններ, որոնցում լրացված չէին շիրարության տևողությունը. Ծաթերում տրամադրված շինարարության թուլտվության մեջ լրացված չէ ամսաթիվը, Տաշիրում շինարարության տևողությունը մասում լրացված էին շինարարության նորմատիվայի տևողությունը զգալիորեն գերազանցող ժամկետներ /ավտոտնակների կամ այլ օժանդակ կառույցների շինարարության համար սահմանվել էին եկու տարի՝ 19.02.2015թ. N1, N2 և 29.04.2015թ N3 շինարարության թույլտվություններ և այլն/: Օձուն, Տաշիր, Ծաթեր և Ստեփանավան համայնքներից շինարարության թույտվությունների պատճենները մարզպետարան ուղղարկվել էին ուշացումով, երբեմն մի քանի ամիս /օրինակ՝ Տաշիրում տրամադրված 19.02.2015թ. N1, N2, 29.04.2015թ N3, 09.06.2015թ. N4, 09.07.2015թ. N5, և 20.07.2015թ. N6, Ծաթերում՝ 11.06.2015թ. N 1, Ստեփանավանում՝ 30.10.2014թ. N10 շինարարության թույլտվությունները և այլն/:

Վերը նշվածները հանդիսանում են ՀՀ կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 91 որոշմամբ սահմանված կարգի խախտումներ:

3. Ավարտված շինարարության շահագործման փաստագրման ակտերը մարզի համայնքներից մարզպետարան ներկայացնելու գործընթացի, ինչպես նաև ներկայացված ավարտված շինարարության շահագործման փաստագրման ակտերի համապատասխանությունը ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգի պահանջներին

Ստուգման ենթակա ժամանակահատվածում ՀՀ Լոռու համայնքներից մարզպետարան էր ուղարկվել 79 ավարտված շինարարության շահագործման փաստագրման ակտ, այդ թվում Վանաձորից՝ 78 և Ստեփանավանից՝ 1:

Ավարտված շինարարության շահագործման փաստագրման ակտերում հինականում բացակայում էին կատարողական փաստաթղթերի վերաբերյալ գրառումները, ինչը հանդիսանում է ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված կարգի խախտում:

4. Վարչական հսկողության գործընթացի համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը

ՀՀ Լոռու մարզպետարանը համայնքների քաղաքաշինական գործունեության վերահսկողությունը իրականացրել էր «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով, ՀՀ նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրով և ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2014 թվականի դեկտեմբերի 27-ի «Վարչական հսկողության 2015 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» N 282-Ա հրամանով սահմանված կարգով, ինչպես նաև համաձայն ՀՀ Լոռու մարզպետի 2015 թվականի հունվարի 19-ի «ՀՀ Լոռու մարզի համայնքներում 2015 թվականի ընթացքում վարչական հսկողություն իրականացնելու մասին» N 6-Ա որոշման:

Համաձայն ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2014 թվականի դեկտեմբերի 27-ի «Վարչական հսկողության 2015 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» N 282-Ա հրամանի ՀՀ Լոռու մարզի համայնքներում 2015 թվականի ընթացքում վարչական հսկողություն պետք է իրականացվեր մարզի 113 համայնքներից 39-ում, սակայն ՀՀ Լոռու մարզպետի 2015 թվականի հունվարի 19-ի «ՀՀ Լոռու մարզի համայնքներում 2015 թվականի ընթացքում վարչական հսկողություն իրականացնելու մասին» N 6-Ա որոշմամբ 2015 թվականի 4 եռամսյակների ընթացքում

քաղաքաշինության բնագավառի վարչական հսկողություն նախատեսվել էր իրականացնել միայն 22-ում, ինչը հակասում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով և ՀՀ նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրով սահմանված կարգին և գործնականում վերահսկողությունից դուրս է թողնում մարզի համայնքների մի մասի քաղաքաշինական գործունեության գործընթացը:

Ստուգման պահին, ժամանակացույցով 3 եռամսյակների ընթացքում նախատեսված 16 համայնքներից միայն 15-ում էին իրականացվել քաղաքշինության բնագավառի վարչական հսկողությունը:

Համայնքներում անցկացված քաղաքաշինության ոլորտի վարչական հսկողության հարցաշարերի պատասխանների հիման վրա կազմվել էին համապատասխան արձանագրություններ, դրանք սահմանված կարգով հրապարակվել էին ՀՀ Լոռու մարզպետարանի պաշտոնական ինտերնետային կայքում և ուղարկվել ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն:

Մարզպետարանի կողմից ՀՀ Լոռու մարզի 15 համայնքերում /Լեռնավան, Շամլուղ, Շնող, Մեծավան, Սարահարթ, Սարամեջ, Դեբետ, Թումանյան, Արեվաշող, Սարչապետ, Աքորի, Վահագնի, Լեռնանցք, Օձուն, Ախթալա/ անցկացված քաղաքաշինության ոլորտի վարչական հսկողության հարցաշարերի մի մասը ամբողջությամբ լրացված չէր, որոշ դեպքերում մի հարցերի պատասխանները հակասում էին մյուսների պատասխաններին, պատասխանների մեջ արտահայտված չէին քանակական տվյալները և գործառույթի իրականացման հետ առնչվող խախտումների մանրամասները, այլ նշված էին միայն ընդհանրացված ամփոփ գնահատականներ: ՀՀ Լոռու մարզի համայնքներից մարզպետարան ուղարկված շինարարության թույլտվությունների ուսումնասիրություններից և վարչական հսկողության հարցաշարերի պատասխանների հետ համադրումից պարզվել է նաև, որ վարչական ստուգում անցկացված համայնքներում քաղաքաշինության ոլորտի վարչական հսկողության հարցաշարերի պատասխանները չեն արտահայտում համայնքներում այդ քաղաքաշինական փաստաթղթի տրամադրման գործընթացի իրական պատկերը և լրացված են ձևականորեն:

Այնուհանդերձ, մարզպետարանի կողմից ՀՀ Լոռու մարզի 15 համայնքերում անցկացված քաղաքաշինության ոլորտի վարչական հսկողության հարցաշարերի պատասխաններից պարզվել է հետևյալը.

Հողահատկացման գործընթաց.

Ախթալա համայնքում հողահատկացումների կարգը նշված է, որ պահպանվում է, սակայն բացակայում են քանակական տվյալները:

Լեռնավան, Սարահարթ, Սարամեջ, Դեբետ, Թումանյան, Արևաշող, Սարչապետ, Աքորի, Վահագնի, Լեռնանցք Մեծավան, Շամլուղ, Շնող, համայնքներում հողահատկացումներ չեն կատարվել:

Օձուն համայնքում՝ հողահատկացումների մասին նշումներ չկան:

Ճարտարապետա-հատակագծային առաջադրանքների /ՃՀԱ-ների/ տրամադրման գործընթաց.

Արևաշող համայնքում տրամադրվել էր 3 ՃՀԱ, իսկ Ախթալայում՝ 1, որոնցում սահմանված կարգի դրույթները պահպանված էին:

Օձուն համայնքում ՀՀ կառավարության 2002 թվակնի օգոստոսի 29-ի թիվ 1473-Ն որոշմամբ սահմանված կարգի խախատումով տրամադրվել էր ՃՀԱ-ներ, բացակայում են քանակական տվյալները:

Լեռնանցք, Վահագնի, Աքորի, Սարչապետ, Թումանյան, Դեբետ, Սարամեջ, Սարահարթ, Շնող, Շամլուղ և Լեռնավան համայնքներում ՃՀԱ-ներ չեն տրամադրվել:

Կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման գործընթաց.

Ախթալա համայնքում ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման գործընթացը իրականացվել է ՀՀ կառավարության 1998 թվակնի հոկտեմբերի 28 թիվ 660 որոշմամբ սահմանված կարգի խախտումով:

Կենսագործունեության միջավայրի փոփոխություններ չեն ծրագրվել Լեռնավան, Շամլուղ, Շնող, Մեծավան, Սարահարթ, Սարամեջ, Դեբետ, Թումանյան, Արևաշող, Սարչապետ, Աքորի, Վահագնի, Լեռնանցք և Օձուն համայնքներում:

Նախագծային փաստաթղթերի համաձայնեցման գործընթաց

Արևաշող համայնքում համաձայնեցվել է 3, իսկ Ախթալայում՝ 1 նախագիծ, որոնցում սահմանված կարգի դրույթները պահպանված էին:

Օձուն համայնքում սահմանված կարգի խախատումով համաձայնեցվել էին 3 նախագիծ, որոնց նախագծման համար ՃՀԱ-ներ չէին տրամադրվել:

Լեռնանցք, Վահագնի, Աքորի, Սարչապետ, Թումանյան, Դեբետ, Սարամեջ, Սարահարթ, Շնող, Շամլուղ և Լեռնավան համայնքներում նախագծային փաստաթղթերի համաձայնեցման գործընթաց չի իրականացվել:

Շինարարության /քանդման/ թույլտվությունների տրամադրման գործընթաց.

Օձուն համայնքներում շինարարության թույլտվությունները տրամադրվել են սահմանված կարգի խախտումով՝ դրանք 3-օրյա ժամկետում չեն ներկայացվել քաղաքաշինական պետական տեսչություն:

Արևաշողում շինարարության թույտվության սահմանված կարգի դրույթները պահպանված էին:

Ախթալայում՝ շինարարության թույտվության սահմանված կարգի դրույթները պահպանված չէին՝ դրանք 3-օրյա ժամկետում չէին ուղարկվել մարզպետարան և քաղաքաշինական պետական տեսչություն:

Մեծավան, Լեռնավան, Շամլուղ, Շնող, Սարահարթ, Սարամեջ, Դեբետ, Թումանյան, Սարչապետ, Աքորի, Վահագնի, Լեռնանացք համայնքներում շինարարության թույտվություն չի տրամադրվել:

Ավարտված շինարարության շահագործման փաստագրման ակտերի տրամադրման գործընթաց.

Արևաշողում տրամադրվել է 3, իսկ Ախթալայում՝ 1 ավարտված շինարարության շահագործման փաստագրման ակտ, որոնցում նշված էր, որ սահմանված կարգի դրույթները պահպանված էին: Սակայն մարզպետարանում այդ համայնքներում տրամադրված ավարտական ակտերի պատճեները բացակայում էին, ինչը հարցաշարերի պատասխաններում արտացոլված չէր:

Օձուն, Լեռնանացք, Վահագնի, Աքորի, Սարչապետ, Թումանյան, Դեբետ, Սարամեջ, Սարահարթ, Շնող, Շամլուղ, Լեռնավան և Մեծավան համայնքներում ավարտված շինարարության շահագործման փաստագրման ակտ չի տրամադրվել:

Շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառնական նշանակությունները փոփոխման գործընթաց.

Ստուգված համայնքներում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառնական նշանակությունները չեն փոփոխվել:

Ինքնակամ շինարարության կանխարգելման, կասեցման և հետևանքների վերացման գործընթաց.

Հիմք ընդունելով վարչական հսկողության հարցաշարերի պատասխանները կարելի է համարել, որ Մեծավան համայքում կառուցվող խմելու ջրի ներքին ցանցը կառուցվում է առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի և շինարարությունը որակել որպես ինքնակամ շինարարության դեպք: Սակայն վարչական հսկողության հարցաշարերի

պատասխաններում կապված ինքնակամ շինարարության դեպքերի հետ որևէ բան այդ մասին նշված չէր:

Ախթալա համայնքում կասեցվել է մեկ ինքնակամ շինարարության դեպք, սակայն ինքնակամ շինարարության հետևանքների վերացման վերաբերյալ որևէ բան նշված չէր:

Ստուգված մնացած համայնքներում ինքնքկամ շինարարության դեպքեր չէին հայտնաբերվել:

5. Քաղաքաշինական գործունեությանն առնչվող այլ գործընթացների համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը:

ՀՀ Լոռու մարզպետը, մարզի համայնքների ղեկավարների կողմիցի խախտումներով տրամադրված քաղաքաշինական փաստաթղթերի վերաբերյալ քաղաքաշինական պետական տեսչության համապատասխան հաղորդումների հիման վրա գրություններ է ուղարկել այդ համայնքների ղեկավարներին՝ պահանջելով քաղաքաշինական փաստաթղթերը տրամադրել սահմանված կարգերին համապատասխան:

Ստուգման արձանագրությունը
կազմեցին՝

Մ. Հովհաննիսյան

Մ. Միրզոյան

Մարզպետարանի ներկայացուցիչ՝

Գ. Հախինայան